


Ագրոկենսաբազմազանության
պահպանությունը և
կայուն օգտագործումը
որպես սննդի
անվտանգության երաշխիք



Ի՞նչ է ագրոկենսաբազմազանությունը

Ագրոկենսաբազմազանությունը բնական ընտրության գործընթացի և ուշադիր ընտրության, ֆերմերների ինտենսիվ գործունեության զարգացման արդյունքն է: Ագրոկենսաբազմազանությունը կենսաբազմազանության կենսական հատվածն է կազմում: Շատ մարդկանց սնունդը կամ ընտանի կենդանիների անվտանգությունը կախված է տարբեր կենսաբանական ռեսուրսների կայուն ղեկավարումից, որոնք կարևոր են սննդի և գյուղատնտեսության համար: Գյուղատնտեսական կենսաբազմազանությունը, այլ կերպ հայտնի որպես ագրոկենսաբազմազանություն կամ սննդի ու գյուղատնտեսության համար գենետիկական ռեսուրսներ, ներառում է՝

- Հավաքված մշակաբույսային տեսակներ, ընտանի կենդանիների ցեղեր, ձկների տեսակներ և չընտելացված ռեսուրսների դաշտի, անտառի ներսում, ներառյալ ծառային արտադրանքները, վայրի կենդանիների որսը սննդի հայթաթման համար և ջրային էկոհամակարգը:
- Չհավաքված տեսակները արտադրական էկոհամակարգում, ինչը աջակցում է սննդի ապահովմանը, ներառյալ հողի միկրոֆլորան, փոշոտողները և այլ միջատներ՝ ինչպիսիք են մեղուները, թիթեռները, անձրևատրդերը և այլն,
- Չհավաքված տեսակները վայրի շրջապատում, ինչը աջակցում է սննդի արտադրանքային էկոհամակարգում:



Ագրոկենսաբազմազանությունը
ընդհանուր կենտրոնական
կենսաբազմազանությունն է

Ագրոկենսաբազմազանությունը շրջապատի, մշակութային առումով տարբեր մարդկանց գենետիկական ռեսուրսների և ղեկավարման համակարգի ու սովորության համագործակցության արդյունքն է, ուստի հողային և ջրային ռեսուրսները օգտագործվում են արտադրության համար տարբեր ճանապարհներով: Հետևապես ագրոկենսաբազմազանությունը ներառում է կենդանիների, բույսերի և միկրոօրգանիզմների բազմազանությունը, որոնք կարևոր են ագրոէկոհամակարգում հիմնական գործառույթների համար, ներառյալ վերջինիս կառուցվածքը և գործընթացը ի պաշտպանություն սննդի արտադրությանն և անվտանգությանը: Տեղական գիտելիքները և մշակույթը կարող են համարվել որպես ագրոկենսաբազմազանության անբաժան մաս, քանի որ գյուղատնտեսությունը մարդկային գործողությունն է, որ ձևավորում ու պահպանում է այս



կենսա
բա
զմազ
անությունը:

Վայրի բույսերի հավաքում ընտանի սպառման համար

Բուրկինա Ֆասոյում և Արևմտյան Աֆրիկյան Սահելում, գյուղական կանայք ուշադիր հավաքում են մրգերը, տերևները և ազգային բույսերի արմատները, ինչպիսիք են բառբաբի ծառը(Adansonia digitata), կարմիր ավելուկի տերևները(Hibiscus saddarifa), կապուկի տերևները(Ceiba pentandra) ընտանեկան սպառման նպատակով: Սա մատակարարում է գյուղական ձավարեղենը, որն ապահովում է սնուցման ոլորտի միայն մի հատվածը և կարող է նվազել ցանկացած տարի: Ավելի քան ընդունվել են 800 տեսակ ուտելի վայրի բույսեր Սահելի տարածքում:

Ագրոկենսաբազմազանության սահմանումը

Ագրոկենսաբազմազանությունը կամ ագրոկենսաբանական բազմազանությունը, երեք մակարդակներով գոյություն ունեցող կյանքն է՝ գենետիկական, տեսակային և էկոհամակարգի: Ուստի, ագրոկենսաբազմազանությունը ներառում է կյանքի բոլոր տեսակների տարատեսակները, սկսած բակտերիայից մինչև խոտերի վրա հանդիպող

սունկը, առաջին մշակաբույսերը, ծառերը, միջատները, կաթնասունները և հենց մշակաբույսերը: Այն ներառում է կառուցվածքային բոլոր մակարդակների բազմազանությունը, սկսած գենետիկական տարբերություններից՝ մարդկանց և պոպուլյացիաների միջև (հարակից անհատների խումբ) ազգային համայնքների (հարաբերվող մարդկանց խումբ) տեսակներից կոնկրետ որոշակի տարածքներում: Ագրոկենսաբազմազանությունը նաև ներառում է բնական գործընթացների ամբողջական շրջան, որից կախված է կյանքը, ինչպիսիք են օրինակ՝ սնուցման շրջանը, ածխածնի և ազոտի ֆիքսացիան, որսը, սիմբիոզ և բնական ժառանգությունը:



Կան ագրոկենսաբազմազանության մի շարք տարբերակիչ հատկություններ, համեմատած կենսաբազմազանության այլ բաղադրիչների՝

- Ագրոկենսաբազմազանությունը ակտիվորեն կառավարվում է թե՛ տղամարդ, թե՛ կին ֆերմենների կողմից,
- Ագրոկենսաբազմազանության շատ բաղադրիչներ կարող են չգոյատևել առանց մարդկային այս

միջամտության, տեղական գիտելիքի և մշակույթի, որոնք անբաժան մասն են կազմում ագրոկենսաբազմազանության իրակացման համար,

Ագրոկենսաբազմազանության դերը

Փորձն ու ուսումնասիրությունները ցուց են տվել, որ ագրոկենսաբազմազանությունը կարող է՝

• Մեծացնել արդյունավետությունը, սննդի անվտանգությունը և տնտեսական վերադարձը
• Նվազեցնել գյուղատնտեսության ճնշումը փխրուն շրջանների, անտառների և վտանգված տարածքների վրա,
• Դարձնել հողագործական համակարգը ավելի ստաբիլ, առողջ և կայուն
• Նպաստել վնասատուների և հիվանդությունների մենեջմենթի բարձրաձայնմանը,
• Պահպանել հողը և հեշտացնել բնական հողի սնուցիչների մուտքն ու առողջությունը
• Նպաստել կայուն ինտեսիֆիկացիային,
• Առանձնացնել արտադրանքների և շահույթի հնարավորությունները,
• Նվազեցնել կամ տարածել անհատների և ազգերի ռիսկերը,
• Օգնել մեծացնելու ռեսուրսների և շրջակա միջավայրի արդյունքը,
• Նվազեցնել արտաքին միջոցների կախվածությունը,
• Բարելավել մարդկային սնուցումն ու ապահովել դեղերի և վիտամինների աղբյուրներով,
• Պահպանել էկոհամակարգի կառուցվածքն ու տեսակների բազմազանության ստաբիլությունը:


Ի՞նչպես է զարգացել ագրոկենսաբազմազանությունը

Ագրոկենսաբազմազանությունը ավելի քան ֆերմենների 10,000 տարվա ջանքերի արդյունքն է: Ֆերմերներն ու հովիվներն ամբողջ աշխարհում շարունակապես բարելավել են իրենց բերքը և կենդանիների գենետիկական ռեսուրսները: Արդյունքը մշակաբույսերի և կենդանիների բազմազանությունն է՝ ադապտացված տեղական պայմաններին: Հենց այս բազմազանությունն է, որը թույլ է տվել մարդկանց բնակվել Երկրի համարյա բոլոր շրջաններում և ապահովել իրենց համար սնունդ՝ ծանր պայմաններում: Մեր մեծ մշակաբույսերի և շատ կենդանիների տեսակների ծագումը հասնում է տրոպիկ և ենթատրոպիկ: Գիտնականները նույնականացրել են ամենաքիչը տասներկու խոշոր աշխարհագրական «բազմազանության կենտրոններ»՝ տարածքներ կամ թեժ կետեր, որոնք ունեն բույսերի, կենդանիների և մշակութային բազմազանության բարձր աստիճան: «Բազմազանության կենտրոնները» կապված են այն տարածքների հետ, որտեղ մշակաբույսերը և կենդանիները սկզբնականում ընտելացվել են իրենց վայրի նախնիներից սկսած և

հետագայում տարածման տարածքներ, որտեղ շարունակական աղապտացիան իրենց շրջապատում և ֆերմենների ու հովիվների կողմից սելեկցիան տեղի է ունեցել: Այս պատճառով հատուկ մշակաբույսեր կարող են թվարկվել ավելի քան մեկ բազմազանության կենտրոններում:

Առաջնային առանձնահատկությունն է համարվում ավանդական գիտելիքի և տեղական նորամուծությունների խառնուրդը: Նման ավանդական գիտելիքները զարգացել են դարերի ընթացքում և կոլեկտիվ հիմքեր ունեն տեղական համայնքների վրա. այն անցնում է սերնդից սերունդ տարբեր ճանապարհներով: Ինչպես նախկինում տեղական նորմուծություններին տեղ տալով հասել են վայրի տեսակների ընտելացմանը, այնպես էլ հիմա շարունակվում է այդ գործընթացը՝ կատարելով կենսական դեր բազմազանության օժանդակության հարցում, ինչի հետ մեկտեղ ապահովվում է վերջինիս անվտանգությունը տարբեր հնարավոր ձևերով:

Ազգային տեղական համայնքները և տեղաբնակները հաճախ ունենում են խորը պատկերացում իրենց շրջապատի և էկոլոգիայի մասին: Նման ազգային գիտելիքները պահպանման սուբյեկտ են հանդիսանում, որոնց պահպանումը մեծ կարևորություն է ներկայացնում: Այնուամենայնիվ տեղաբնակները վնաս են կրում իրենց ապրելատեղի վերացման պայմաններում: Մրա հետևանքով ականատես կարող ենք լինել տեղական գիտելիքների ոչնչացմանը: Ներկայումս իրականացվում են կանխարգելիչ քայլեր, որոնք ունեն իրավական հիմքեր՝ ՄԱԿ-ի տեղաբնիկների իրավունքների դեկլարացիան (UNDRIP), ինչպես նաև այլ կոնվենցիաներում: Մա



հաստատում է, որ տեղաբնիկները պարտադրված կամ վախեցած չեն, որ իրենց համաձայնությունը ստացվում է կամ թույլտվության առկայությունը որևէ գործողության կամ գործողություն սկսելու համար, որ նրանք ունեն ամբողջական տեղեկություն ցանկացած առաջարկված զարգացումների չափի և ազդեցության մասին և, որ վերջիվերջո նրանց որոշումները կամ համաձայնությունն չտալը հարգվում է:



Ֆերմերների գոյատևումը բարդ կլիմայական պայմաններում և սահմանային տարածքներում, օրինակ՝ չոր կամ լեռնային շրջաններում: Ավանդական ժառանգական ռեսուրսները կարող են օգտագործվել նվազագույն գյուղատնտեսական ջանքերով, ունեն որակական հատանիշներ ու համապատասխանում են կարիքներին և հաճախ մեծ դեր ունեն գյուղական համայնքում: Մեծագույն գենետիկական բազմազանությունը նաև նպաստում է կլիմայական և հիվանդությունների ռիսկերի նվազեցմանը:

Չնայած իր օգուտներին՝ զարգացող երկներում, գյուղատնտեսությունն օգտագործված բազմազանությունը նվազում է արագորեն: Մաունի շատ պատճառներ: Ավելի քան 2000 ֆերմային կենդանական ցեղեր կանգնած են վերացման եզրին: Կա կարծիք, որ մշակաբույսային տեսակների բազմազանությունը նվազել է 75%-ով սկսած 19-րդ դարից: Մա մտադրում է ապագա սննդի անվտանգության համար մեծ վրանգ:

Ներկա միտումները

Վերջին 100 տարիների ընթացքում, ագրոկենսաբազմազանության կորուստները մեծացել են ահռելի չափերով և այս կորուստները դեռ մեծանում են արագորեն, հատկապես զարգացող երկներում, որտեղ գյուղատնտեսական կենսաբանական բազմազանությունը հաճախ շատ հարուստ է: Պատմության ընթացքում, հաշված 250000 բույսերի տեսակներից, մոտ 7000 օգտագործվել են որպես սննդի մշակաբույսեր մարդկանց կողմից: Ներկայումս, միայն նրանցից երեքն են՝ եգիպտացորենը, բրինձը և ցորենն են հաշվում կալորիաների մոտ 60% և պրոտեինների 56%, որոնք մարդիկ ստանում են բույսերից: Տասներկու մշակաբույսեր հինգ կենդանիների տեսակների հետ միասին վերցրած ապահովում են ժամակակից սննդի մեծ մասը: Բացի ընդհանուր տեսակներից, բազմազանությունը տեսակների ներսում՝ գենետիկական բազմազանությունը նույնպես կտրուկ նվազում է: 20-րդ դարի կեսերից մշակաբույսերի տեսակների բազմազանությունը նվազել էր 75%: Մալիում 60% սորգոմի տեղական տեսակները անհետացել են մեկ տարածաշրջանում վերջին 20 տարիների ընթացքում: Ներկայումս նույնպես նման միտումներ նկատվում են և դա կանխելու համար հատկապես զարգացած երկներում իրականացվում են տարբեր տեսակների խաչասերումներ, որոնցից ամենահաջողվածը կարելի է համարել Հոլշտային-Ֆրիզիան տեսակը, որն ապահովում է



Եվրոպայի 60%, իսկ ԱՄՆ 90% կաթնային և մսային արտադրանքը: Տեղական խաչասերման առանձահատկություն կարող են հանդիսանալ դիմացկունությունը, հիվանդությունների նկատմամբ հակազդեցությունը և նույնիսկ դժվար պայմաններում արտադրողականությունը: Մակայն ամեն տեսակի անհետացման դեպքում վերանում է նաև տվյալ տեսակի գենետիկական ռեսուրսները, հետևապես նաև ավանդական գիտելիքերը տվյալ տեսակի օգտագործման մասին: Մա էլ իր հերթին հանգեցնում է ոչ միայն տնտեսական և կենսաբանական փոփոխությունների, այլև սոցիալական՝ հանգեցնելով տեղական երիտասարդներին արտագաղթելու: Ագրոկենսաբազմազանության վրա ազդող մեկ այլ գործոն է կլիմայական փոփոխությունները: Գյուղանտնտեսական քաղաքականությունն ու շուկայական պայմանները հաճախ կենտրոնանում են բացառապես «Ժամանակակից» տեսակների վրա, որոնք գերիշխում են շուկայում:

Ինչո՞ւ է ագրոկենսաբազմազանությունը կարևոր

Բույսերի և կենդանիների գենետիկական ռեսուրսները մշակաբույսերի տեսակների և կենդանիների ցեղերի հետագա զարգացման հիմքն են: Փոքր ֆերմեները և հովիվները Աֆրիկայում, Ասիայում և Լատինական Ամերիկայում հատկապես կախված են գենետիկական ռեսուրսների բազմազանությունից: Տեղական բույսերի տեսակների և ընտելացված կենդանիների ցեղերի հարուստ բազմազանությունը նպաստում է այս ֆերմերների և հովիվների ճկունության ուժեղացմանը՝ դժվար կլիմայական պայմաններին և սահմանային տեղանքներին ընդառաջ՝ չոր և տափաստանային տարածքներում: Ավանդական մշակաբույսերը և



Բնչո՞ւ է գյուղատնտեսական բազմազանությունը կարևոր

1. Գյուղատնտեսական բազմազանությունը գյուղատնտեսության հիմնք է:

2. Գյուղատնտեսական բազմազանությունը կարող է ապահովել ծախսերի արդյունավետ ճանապարհ ֆերմենների համար՝ վնասատուների և հիվանդությունների ղեկավարման համար:

3. Գյուղատնտեսական բազմազանությունը տալիս է ֆերմերներին կլիմայական ռիսկերի ղեկավարման հնարավորություն տեսականների համար:

4. Գյուղատնտեսական կենսաբազմազանությունը կարող է նպաստել առողջությանը և սնուցմանը:

5. Գյուղատնտեսական բազմազանությունը կարող է դեր խաղալ հողի առողջության պահպանման, սննդի և կարևոր փոշոտողների բնակավայրի և բնական վանասատու գիշատիչների համար, որոնք կենսական են գյուղատնտեսական արտադրության համար:

6. Ազգային գիտելիքը և մշակույթը հաճախ հիմնված է տեղական տեսականների բազմազանության և դրա օգտագործման վրա:

Կենդանիների ցեղերը կարող են օգտագործվել ամենաքիչ գյուղատնտեսական ներդրումով, ունենալ բնութագրիչ որակ, որը կհամապատասխանի տեղական կարիքներին, հաճախ խաղալ կարևոր դեր նոր արտադրանքում, ինչպես ստեվիայի կամ վինոայի դեպքում էր, որոնք ունեն շուկայական ներուժ միջին խավի շրջանում ինչպես զարգացող երներում, այլնպես էլ զարգացած տնտեսություններում:

Ագրոկենսաբանական բազմազանությունն ապահովում է շրջակա միջավայրի ծառայություններով (հող, ջուր, բնակավայր, փոշոտիչներ) և աջակցում է կայունությանն ու ճկունությանը գյուղատնտեսական համակարգում, այն կարող է ապահովել բազմազան և սնուցիչային սննդակարգ, նպաստել առողջությանը և ազգային գիտելիքի ու մշակութային ինքնության պահպանմանը: Հաշվի առնելով այս հանգամանքը, ագրոկենսաբազմազանությունը կենտրոնական բաղադրիչ է ապրելամիջոցի և աղքատ սեփական տերերի արտադրողականության համար:

Ագրոկենսաբազմազանությունը իր տեղական մշակաբույսերի տեսակների և կենդանիների ցեղերի առատությամբ, ինչպես նաև մշակաբույսերի և կենդանիների վայրի տեսակներով թաքցնում է շատ դեռևս անհայտ գենետիկական բնութագրիչներ, որոնք կարող են լինել կարևոր մարդկության գոյատևման համար: Որպես նոր ներուժային տեսակների հիմք, այն կարող է ծառայել որպես մարդկության համար ապագայի երաշխիք:

Ագրոկենսաբազմազանության կառավարում

Կենսաբանական բազմազանության կոնվենցիան, որը հյուրընկալվել էր ՄԱԿ-ի ծրագրում, ապահովում է պահպանման և բազմազանության կայուն

օգտագործման համաշխարհային շրջանակը: CBD-ն սերտ համագործակցում է Սննդի և գյուղատնտեսության կազմակերպության հետ իր ծրագրերի իրագործման շուրջ, որոնք կապված են ագրոկենսաբազմազանությանը: FAO-ի հանձանժողովը գենետիկական ռեսուրսների Սննդի և գյուղատնտեսության (CGRFA) միակ միջկառավարական մշտական ֆորումն է կառավարությունների համար՝ քննարկելու և բանակցելու ագրոկենսաբազմազանության հետ կապված խնդիրները: FAO-ի բույսերի գենետիկական ռեսուրսների սննդի և գյուղատնտեսության մասին միջազգային համաձայնագիրը (ITPGRFA) ապահովում է բույսերի գենետիկական ռեսուրսների շարունակական համաշխարհային փոփոխությունը, որոնք կարևոր են գյուղատնտեսության և սննդի անվտանգության համար: Համաշխարհային մակարդակով ոչ միայն կենսաբազմազանության, այլև ագրոկենսաբազմազանության ուսումնասիրություններն ու գործողություններն են իրականացվում Միջազգային գյուղատնտեսական ուսումնասիրության խորհրդատվական խմբի կողմից (CGIAR):

In situ կամ ex situ պահպանում

Ագրոկենսաբազմազանությունը կարող է պահպանվել in situ (տեղական) կամ ex situ (ոչ տեղական), սկզբնական բնակավայրի մեջ կամ դուրս: In situ պահպանումը ագրոկենսաբազմազանության պահպանումն է իր ծագման վայրում, այն շրջապատում, որտեղ բույսերը կամ կենդանիները զարգացրել են իրենց առանձնահատկությունները: Ex situ պահպանումը ագրեկենսաբազմազանության պահպանումն է ծագման վայրից դուրս, ինչը կարող է կատարվել կենդանի պոպուլյացիաների պահպանմամբ կամ



սառեցված գենիկական նյութերի պահպանմամբ, in vivo (կենդանի) պահպանումը կատարվում է կենդանաբանական կամ բուսաբանական այգիներում կամ կառավարությանը պատկանող ֆերմաներում, in vitro (ապակու մեջ) պահպանումը գենտիկական բանկաներում՝ սերմերի, հյուսվածքի, սպերմայի, էմբրիոնների կամ սոմատիկ բջիջների տեսքով: In situ և ex situ պահպանումն երկու տարբեր, բայց լրացուցիչ մոտեցումներ են ագրոկենսաբազմազանության պահպանման համար, ամեն մեկը խաղում է կոնկրետ և կարևոր դեր: In situ պահպանումն օգնում է երաշխավորել տեսակների գոյակցումն իրենց բնական բնակավայրում և թույլ է տալիս նրանց ադապտացվելու փոփոխվող շրջապատին: Ex situ պահպանումը պահում է գենետիկական նյութն իր ներկա վիճակում և կանխում է անհետացումը:

Ագրոկենսաբազմազանության պահպանումն ու կայուն օգտագործումը՝ զարգացող համագործակցություններում գործողության տարբերակներ

Կենսաբանական բազմազանության կոնվենցիան (CBD) հաստատելուց հետո կողմերը պատրաստ էին պահպանել կենսաբանական բազմազանությունն իրենց սեփական երկրի ներսում, ինչպես նաև աջակցել այլ երկներին կոնկրետ զարգացող երկներում՝ հասնելու համար կոնվենցիայի խնդիրների լուծմանը: Գերմանիան օգնում է իր գործընկերներին իրագործել CBD-ին դժվար զարգացման համագործակցության գործողությունների ժամանակ: Շատ ծրագրեր գործ ունեն կենսաբազմազանության պաշտպանությանն ընդհանուր առմամբ և ուրիշներն ունեն ագրոկենսաբազմազանության բաղադրիչ:

Հիմնական գործոններն ագրոկենսաբազմազանության աջակցության գործողությունների հաջողության համար համապատասխանաբար թիրախավորվում են հանդիսատեսի վրա: Սրանք կարող են ընդհանուր ձևով բաժանված լինել երեք կատեգորիաների՝ արտադրողներ, սպառողներ և քաղաքագետներ, կամ “ոլորտի մակարդակով”, «ընդհանուր հասարակական» և “քաղաքական մակարդակ”:

Քաղաքական մակարդակ

Ագրոկենսաբազմազանության մասին միջազգային ռեզոլուցիաները և կարգավորումները կարիք ունեն մշակվելու որպես օրենքներ՝ քաղաքականության և իրագործվող գործողությունների ազգային մակարդակով: Մրանում կարևոր է օժանդակել տարբեր ոլորտների համագործակցություններին, օրինակ՝ շրջակա միջավայր, գյուղատնտեսություն, առևտուր, կրթություն և առողջություն:

Բույսերի գենետիկական ռեսուրսներ

Այն ժամանակներում, երբ աշխարհի աճող բնակչությունը կարիք ունի սնվելու սահմանափակ ռեսուրսներով՝ փոփոխվող կլիմայական պայմաններում, գյուղատնտեսական կենսաբազմազանության պահպանումը և կայուն օգտագործումը ձեռք է բերում չափազանց մեծ կարևորություն: 250,000 համաշխարհային մակարդակով հայտնի բույսերի տեսակներից 7000 պատմականորեն օգտագործվել են մարդկային սննդակարգի մեջ: Ներկայումս, սակայն, միայն 30 մշակաբույսեր համաշխարհային գյուղատնտեսությանն են առկա և միայն երեք տեսակներ են ծառայում աշխարհին: Յուրաքանչյուր բույսի

տեսակների, տեսակների բարձր քանակի և մեծ գենետիկական բազմազանություն կարող է լինել: Ժամանակակից գյուղատնտեսության երևան գալով, անթիվ տեղականորեն աղապտացված մշակաբույսերի տեսակներ են փոխարինվել բարձր բերքատվություն ունեցող ժամանակակից տեսակների

Ընդհանուր հասարակություն

Հասարակական տեղեկության և իրազեկման բարձրացումն ագրոկենսաբազմազանության կարևորության մասին կարևոր են ագրոկենսաբազմազանության կայուն օգտագործման և պահպանման համար: Հեռուստատեսական ֆիլմերը, քարոզարշավները, պոստերները, հոդվածները, բրոշյուրները, ինտերնետային բլոգները, ինչպես նաև տեղական մրցակցությունները և ցուցադրումները կենտրոնացած ագրոկենսաբազմազանության վրա, կարող են օգտակար լինել: Միջազգային Կենսաբազմազանության օրը՝ մայիսի 22, կարող է օգտագործվել հատուկ քարոզարշավների ժամանակ՝ կենտրոնանալով ագրոկենսաբազմազանության վրա: Ներդնելով ագրոկենսաբազմազանությունը դպրոցների և համալսարանների ծրագրերում հետագա կարևոր քայլերն են գալիս հասարակական գիտելիքի խորցման համար: Հավելյալ, ագրոտուրիզմը կարող է ստեղծել իրազեկում ագրոկենսաբազմազանության շրջանում: Լավ օրինակ սրա համար BMZ-ի կողմից հիմնված ծրագիրն է գյուղական Ալբանիայի ագրոկենսաբազմազանության պահպանման համար, որը համախմբում է կենսաբազմազանության պահպանումը՝ կայուն գյուղատնտեսության և տուրիզմի հետ:




հետ: Հարավային Կորեայում 74% հիմնական մշակաբույսային տեսակներից 1985թ. փոխարինվել են 1993թ.: Սա հանդիսանում է ոչ միայն փոփոխվող կլիմայական պայմանների հետևանք, այլև իրազեկման ձախողման: Աշխարհի բոլոր երկները կախված և անկախ բույսերի գենետիկական ռեսուրսներից, ունեն շարունակական կարիք՝ պահպանելու, փոխանակելու և զարգացնելու նոր նյութ՝ հիմնված ազգային տեսակների վրա: Սա կայուն գյուղատնտեսության և ամուր, դինամիկ ագրո-էկոհամակարգի հիմքն է: Բույսերի բազմազանությունը կարևոր է էկոհամակարգի ծառայությունների առաքման համար՝ ինչպիսին է օրինակ աղտոտումը, վնասատու-գիշատիչների բալանսավորումը, ածխաթթվի փակուղին և ջրի պահպանումը:

Գենետիկորեն տարբեր բույսերի պոպուլյացիաներ և տեսակներով հարուստ էկոհամակարգեր ունեն ավելի մեծ ներուժ՝ կլիմայական փոփոխություններին ադապտացվելու և ճկունություն զարգացնելու համար: Այնուամենայնիվ, սննդի աճող պահանջը սոցիալտնտեսական զագացման ջանքերի հետ սպառնում է ավանդական տեսակների գոյությանը և կարող է հանգեցնել վայրի տեսակների բնական բնակավայրերի ոչնչացմանը: Սա հանգեցնում է գենետիկական էրոզիայի և գենետիկական ոչնչացման: Ապահովելու համար սննդի անվտանգությունը, համապատասխան ուշադրություն է պետք իրականացնել բույսերի գենետիկական ռեսուրսներին:

Սննդի և գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների համաշխարհային կառավարում

Բույսերի ընտելացումն սկսվել է մոտ 10,000 տարի առաջ, սակայն միայն 150 տարի առաջ, բույսերի գենետիկական ռեսուրսներն սկսեցին օգտագործվել գիտական նպատակներով: Գենետիկայի առաջխաղացման շնորհիվ՝ հետևելով Դարվինի էվոյուցիոն տեսության զարգացմանը, Մենդելի աղյուսակի բացահայտմանը և հետագայում մշակաբույսերի ծագման առաջխաղացման շնորհիվ գենետիկական բազմազանության հնարավորությանն ու արժեքին: Բոլանդական կարտոֆիլի 1846թ. կտրուկ աճը ցույց տվեց գենետիկական բազմազանության կարիքը գյուղատնտեսությունում:



1960-1970-ականներին, Կանաչ հեղափոխությունը զարկ տվեց արտադրողականությանը, սակայն դրա հետ միասին նպաստեց գենետիկական բազմազանության կորստին: Միայն այդ ժամանակ գյուղատնտեսական արտադրանքների համակարգերի գենետիկական էրոզիան և զգայնությունը հանգեցրեց սննդի և գյուղատնտեսության համար բույսերի գենետիկական ռեսուրսների գիտական և ինդուստրիալ զարգացման խորացմանը:



Վայրի բույսերը սննդի և առևտրի համար

Վայրի բույսերը նպաստում են մեր սննդի խթանմանը: Խաղալով որպես անվտանգության ցանց անսպասելի պակասի դեպքում, վայրի սնունդը կարող է խաղալ մեծ դեր բարելավելու մարդկանց սննդի և սնուցման ապահովումը: Տեղական մակարդակով շատ տեսակներ նպաստում են ուղղակիորեն մարդկանց սնման կարիքներին: Բացի մարդկանց սնունդ ապահովելուց խրոնիկ սովի պայմաններում, նրանք կարող են հաղթահարել «թաքնված» սովը՝ միկրոսնուցման պակասի դեպքում: Վայրի սնունդը, ինչպիսին են վայրի բանջարեղենները, կարող են խաղալ կենսական դեր նման թերսնման կանխարգելման գործում: Մրան հավելած, նրանք կարող են լցնել սննդի բացերը սովի սեզոնը բերքահավաքների ընթացքում: Նման օրինակ որպես վայրի բույս, որն օգտագործվում է որպես սնունդ, հանդիսանում է աֆրիկյան բաոբաբը (*Adansonia digitate* L.): Նրա բույսերը և մրգերը օգտագործվում են որպես սնունդ և բժշկական նպատակներով Աֆրիկայի շատ շրջաններում: Տերևները հիանալի աղբյուր են պրոտեինի համար՝ պարունակելով կենսական ամինոթթուներ: Բացի սննդից, շատ վայրի բույսեր հավաքվում են առևտրի, բժշկական կամ կոսմետիկ նպատակների համար, ինչպես սատանայի եղունգը (*Harpagophytum procumbens*) Աֆրիկայի Կալահարի անապատում: Այս առևտուրը միջազգայնորեն կարգավորվում է «Միջազգային առևտուրը վայրի ֆաունայի և ֆլորայի վտանգված տեսակների մասին» կոնվենցիանյով: (CITES)

Կենդանիների գենետիկական ռեսուրսներ

Ինչո՞ւ են կարևոր

Ընտանի կենդանիները նպաստում են գյուղատնտեսության արդյունքի համաշխարհային արժեքի 40% և ապահովում են մարդկային համաշխարհային պրոտեինի սպառման 26%, ընհանուր կալորիաների 13%: Մարդկանց համար կենդանիների գենետիկական ռեսուրսների արժեքը բազմազան են, քանի որ նրանք ապահովում են տարբեր արդյունավետ, մշակութային և էկոլոգիական ծառայություններ: Կենդանիները նպաստում են սննդի արտադրանքին (կաթ, միս, ձու), ապրուստի միջոցներ և տնտեսական արտադրանք: Կենդանիներն ունեն նաև էկոլոգիական ազդեցություն՝ դրական և բացասական իմաստներով այն էկոհամակարգի վրա, որտեղ այն գործում է՝ մեթանի արտադրանք, ածխածնի իզոլացիա, ջրի շրջանառության կարգավորում, հողի պարարտության ապահովում և վայրի կյանքի բնակավայրի ապահովում: Կենդանիների գենետիկական ռեսուրսների բազմազանության մակարդկն ուղղակիորեն կապված է կենդանիների պոպուլյացիաների կարողությանն ադապտացվելու շրջակա միջավայրի հետագա փոփոխություններին և շուկայական պայմաններին:



Սննդի և գյուղատնտեսության համար կենդանիների գենետիկական ռեսուրսների համաշխարհային ղեկավարում

Սննդի և գյուղատնտեսության համար գենետիկական ռեսուրսների FAO-ի հանձանժողովը ստեղծել է 1997թ. միջկառավարական տեխնիկական աշխատող խումբ՝ սննդի և գյուղատնտեսության համար կենդանիների գենետիկական ռեսուրսների մասին (SoW-AnGRFA): Այս աշխատանքային խումբը կայուն ձևով արտահայտում է մտահոգությունները կենդանիների գենետիկական ռեսուրսների շտապ կարիքների մասին: Չկա միջազգայնորեն



ընդունված կոնվենցիա կամ դաշնագիր կենդանիների գենետիկական ռեսուրսների պահպանման մասին, ինչպիսին կար բույսերի դեպքում:

Մենքի համար կենդանիների գենետիկական ռեսուրսների պահպանումն ու կայուն օգտագործումը կարևոր են գյուղական շրջանների համար, սննդի և սնման ապահովության և մշակութային ու էկոհամակարգային ծառայությունների համար, հատկապես ներկա միտումներն ինտեսիֆիկացիայի և կենդանիների արտադրանքի գենետիկական հիմքերի նեղացման համար: Տարբեր շրջապատների և արտադրական համակարգերի համար կարիք ունեն զարգանալու

հատուկ կենդանիների աջակցման մարտավարություններ: Ներկրված բարորակ ցեղերը հաճախ համապատասխանում են հատուկ գործողությունների համար միայն և նման դեպքում աղքատ գյուղական բնակչությանը 0 կամ քիչ օգուտ է ստացվում: Այնուամենայնիվ, երկարաժամկետ, ժամանակակից, ինտենսիվ, թանկ արտադրանքը մեծապես կփոխարինի ավանդական, ընդարձակ արտադրանքին այն տեղերում որտեղ հնարավոր է:

Միջազգային համաձայնագրեր

Գենետիկական ռեսուրսներն ապահովում են բլոկների կառուցումը, որոնք թույլ են տալիս կլասիկ բույսեր բազմացնողներին և բիոտեխնոլոգիաստներին զարգացնելու նոր գովազդային տեսակներ և այլ կենսաբանական արտադրանքներ: Ո՛չ գենետիկական ռեսուրսները, ոչ՝ էլ բիոտեխնոլոգիաները, որոնք կապ ունեն վերջիններիս հետ, իրենցից չեն ներկայացնում մաքուր շուկայական արժեք: Սկսած 1960-ականներից մի շարք միջազգային մարմիններ և



համաձայնագրեր (TRIPS/WTI, UPOV) ընդունել են կարգավորումներ մտավոր սեփականության իրավունքների մասին, որոնք թույլ են տալիս իրավապաշտպաններին ստանալու շահույթների մի մասն իրենց զարգացրած գովազդային արտադրանքներից: 1990-ականների սկզբից այլ միջազգային համաձայնագրեր տրամադրել են հավասար, բայց կոլեկտիվ իրավունքներ գենետիկական ռեսուրսներ ապահովողների համար: Այս իրավիճակը պահանջում է խթանման առաջընթացի համար սիմետրիկ և բալանսավորված համակարգ: Մյուս կողմից նոր բիոտեխնոլոգիաների զարգացման և իրագործման համար, իսկ այլ կողմից հաստատելու համար գենետիկական ռեսուրսների շարունակական պահպանությունը, զարգացումը և մատչելիությունը, որոնց համար այս տեխնոլոգիաներն օգտագործվում են: Հիմա ազգային կառավարությունների իրագործման առարկա են հանդիսանում այս դրույթները, ներառյալ համապատասխան ազգային օրենսդրության զարգացումը, որն ամբողջապես հաշվի կառնի համակարգի երկու հիմնասյուներին, այսպիսով թույլ տալով բազմաթիվ կապող միջազգային կազմակերպությունների իրականացման հավասարակշռությունն ու սիներգիան: Նպատակը պետք է լինի ապահովելը սննդի երկարաժամկետ անվտանգությունը, պաշտպանել ապրուստի միջոցները և ապահովել խթան՝ պահպանելու համար կենսաբանական և գենետիկական ռեսուրսները: Հատկապես, օգնության կարիք զգացվում է ազգային սերմի օրենքի ձևավորման հարցում, օրինակ՝ ձևավորելու *sui generis* (յուրահատուկ) բույսի տեսակների պաշտպանության մասին օրենք ըստ տվյալ երկրի համապատասխան պայմանների, կարիքների և շահերի: Այլ կարևոր դաշտեր, որտեղ աջակցության կարիք է զգացվում կարողությունների զարգացումն է, իրազեկումը և ագրոկենսաբազմազանության մասին համաձայնագրերի տարածումը, այն ճանապարհով, որ հասարակության բոլոր մակարդակները, անգամ համապատասխան ոլորտները ներգրավված լինեն:

Կենսաբազմազանությունն ու կոնվեցիա կենսաբազմազանության մասին կոնվենցիան

“Կենսաբանական բազմազանությունը” կամ կարճ “կենսաբազմազանությունը” ներառում է երկրի վրա կյանքի բազմազանությունը, սկսած գենետիկական բազմազանությունից մինչև էկոհամակարգի բազմազանության տեսակները:



Կենսաբազմազանության մասին կոնվենցիան, որն ընդունվել է Ռիո դե Ժանեյրոյում 1992թ. պարունակում է երեք էլեմենտ՝ կենսաբանական բազմազանության պահպանում, դրա կայուն օգտագործում և վերջինիս կողմից ստացված օգուտների անաչառ բաժանում: Միաժամանակ, 179 երկրներ և ԵՄ-ն միացել են կոնվենցիային: Ստորագրելով կոնվենցիայի տակ, երկները համաձայնվել են ոչ միայն պահպանել իրենց տարածքում առկա կենսաբազմազանությունը, այլ նաև օժանդակել զարգացող երկներին՝ անհրաժեշտ քայլեր իրականացնելու համար:

Ագրոկենսաբազմազանության կողմից ապահովվող էկոհամակարգային ծառայություններ

Ծառայությունների մատուցում: Էկոհամակարգից ստացված արտադրանքներն են. սնունդը, մանրաթելը, վառելիքը, պարարտանյութը, գենետիկական ռեսուրսները, բիոքիմիկատները, կոսմետիկան, դեղորայքը և մաքուր ջուրը:

Ծառայությունների կարգավորում: Էկոհամակարգային գործընթացների կարգավորում ստացված օգուտներից են. աղտոտումը, էրոզիայի կանխումը և հողի պարարտայնության պահպանումը, ածխածնի պահեստավորումը և իզոլացումը, ջրի կարգավորումը և մաքրումը, օդի որակի կարգավորումը, թափոնների և աղտոտիչների մանրէաբանական տարրալուծումը, բնական վնասատուների և հիվադությունների կառավարումը, ինչպես նաև կլիմայական բազմազանության և շոկերի նկատմամբ կայունությունը:

Բազմազանության պահպանները

Փոքր ֆերմերները, հատկապես սահմանային հողերի, հաճախ ավելի հետաքրքրված են լինում ռիսկերի մինիմալիզացմամբ, քան արտադրողականության մաքսիմալացմամբ: Նրանք կարիք ունեն սնվելու և պահելու իրենց ընտանիքները: Պահպանելով տարբեր մշակաբույսերի բազմազանությունը հնարավոր է նվազեցնել ամբողջական կորստի ռիսկը բերքահավաքի ձախողման դեպքում: Հատուկ տեսակ, բազմազանություն կամ ցեղ կարող է նույնպես լինել սոցիալապես և մշակութային առումով արժեքավոր՝ օգտագործվելով որպես ավանդական խոհանոցի կամ արարողության մաս: Կանայք հաճախ ունենում են մեծ դեր ագրոկենսաբազմազանության պահպանման գործում: Ֆերմերները նույնպես փնտրում են նոր ճանապարհներ բազմազանությունը կայուն ճանապարհով օգտագործելու համար՝ հաշվի առնելով ռիսկերի տարածումը, սննդի անվտանգության խորացումը և կենսապայմանների բարելավումը: Աղքատ ֆերմերները հիմնականում նորամուծություններ են մտցնում կենսաբազմազանության ղեկավարման մեջ՝ մեծացնելով իրենց հնարավորությունների մակարդակը տարբեր եղանակային պայմանների դեպքում և շահագործելու միկրո-շրջապատներն իրենց ագրո-էկոհամակարգերում:



Մշակութային ծառայություններ: Ոչ նյութական օգուտները, որոնք մարդիկ ստանում են էկոհամակարգից հանդիսանում են հանգստի և էսթետիկ արժեքներ, մշակութային ժառանգություն, ուսուցողական արժեքներ, ներշնչանք, հոգեկան և կրոնական արժեքներ, ինչպես նաև տեղական գիտելիքի և նորամուծությունների պահպանում և հետագա զարգացում:



Ագրո-էկոտուրիզմը տուրիզմի տեսակ է, որը միավորում է էկոտուրիզմը և ագրոտուրիզմը, կենտրոնանալով բնության պահպանման, գյուղատնտեսության և մշակույթի վրա: Այն կարող է նպաստել մշակաբույսային տեսակների և ընտանի կենդանիների բնորոշ ռեզիդուալ բազմազանության *in situ* պահպանմանը: Ինչքան անսովոր է տեսակը կամ ցեղը, այնքան համապատասխան է իր գովազդային նպատակին: Ապահովելով շահույթ և աշխատանք, ագրո-էկոտուրիզմը կարող է ծառայել որպես խթան ագրոկենսաբազմազանության և ավանդական մշակույթի իրականացման պահպանման համար, խթանել հասարակության հպարտությունն ու ժառանգության, ագրոկենսաբազմազանության իրազեկմանը և վերածնել ավանդական մշակաբույսերի և տեղական ֆերմային կենդանիների գնահատումը: Կան տարբեր օրինակներ, որոնք իրականացվում են միջազգային ֆինասավորման շրջանակներում, օրինակ՝ «Ագրոկենսաբազմազանության պահպանումը Ալբանիայի գյուղական համայնքերում» կամ «Մասնավոր սեկտորի մրցունակությունը Կոսովոյի գյուղական համայնքներում»:

Գյուղատնտեսական բազմազանության պահանջության գինը տեղական, ազգային և համաշխարհային շահերի համար ներկայումս նեղանում է փոքր ֆերմերների և հովիվների շնորհիվ: Ունենալով «հասարակական դրական» գոյության արժեքները, դրական խթաններ են պահանջվում՝ հաստատելու համար ագրոկենսաբազմազանության պահպանման և օգտագործման հասարակական ցանկալի մակարդակները: Ագրոկենսաբազմազանության կապված վճարներն էկոհամակարգի ծառայությունների համար կարող է տրամադրել նմանատիպ խթաններ գների էժանացման և աղքատության առումով: Աջակցությունը պետք է լինի ծրագրավորված՝ ընդգրկելով տարբեր խթանների մեխանիզմներ, հարմարեցված հատուկ կոնտեքստի: Կառավարությունները, ոչ

կառավարական կազմակերպությունները, բազմակողմանի գործակալությունները, մասնավոր կազմակերպությունները, ակադեմիական հաստատությունները և անկախ էքսպերտները կարիք ունեն համագործակցելու՝ խթանելու համար ֆինանսական լուծումների պահպանությունը տեղեկության փոխանակման և փորձաքննության, ուսումնասիրությունների և գործիքների զարգացման նպատակով:

Ագրոկենսաբազմազանությունից ծագած արտադրանքներին տնտեսական արժեք ավելացնելը, կարող է ծառայել որպես խթան փոքր ֆերմերների և կենդանիներ պահողների համար՝ շարունակելու խորացնել աճող ավանդական մշակաբույսերի ու հազվադեպ տեղական անասունների ցեղերի բազմացումը, որոնք ոչնչացման եզրին են նոր ժամանակակից տեսակների կողքին: Գենետիկական ռեսուրսներն օգտագործվում են և հետևապես կորստի առարկա չեն հանդիսանում: Ագրոկենսաբազմազանության արտադրանքների արժեքն ավելացնելու հաջողությունը կարող է գրավել պետական ներդրումներն՝ ամբողջապես մոռացված և ոչ լիովին օգտագործված տեղական տեսակների զարգացման և պահպանման համար, դրանով երաշխավորելով դրա հետ կապված էկոհամակարգերի ծառայություններն ագրոկենսաբազմազանությունում:



Ի՞նչ է տեղի ունենում ագրոկենսաբազմազանության հետ

Տեղական բազմազան սննդի արտադրական համակարգերը վտանգի տակ են, ներառյալ տեղական գիտելիքն ու մշակույթը, ֆերմերների հմտությունները: Այս նվազամամբ, ագրոկենսաբազմազանությունը վերանում է՝ կորստի մասշտաբներն ահռելի են: Բերքատվության տեսակների այս անհետացումով, տեսակները և ցեղերը, չհավաքված տեսակների մեծ մասը նույնպես վերանում է:

Մշակաբույսային բազմազանության ավելի քան 90%-ը ֆերմերային դաշտերից անհետացել են և շատ տեղական կենդանիների տեսակների կեսից ավելին անհետացել: Ամբողջ աշխարհում հայտնի 17 հիմնական ձկնային տեսակներ հիմա որսի առարկա են դարձել՝ անցնելով իրենց կայունության սահմանը, ինչը հանգեցրել է մի շարք տեսակների վերացմանը: Անտառային կազմի կորուստը, ափամերձ ջրատարածքները, այլ «վայրի» չմշակված տարածքները և ջրային շրջակայքի ավերումը սրում է ագրոկենսաբազմազանության գենտիկական էրոզիան:

Ընդահունք առմամբ, աղքատ տնային տնտեսությունները վստահում են վայրի սննդի մուտք ունենալուն, քան հարուստ սննդին: Այնուամենայնիվ որոշ տարածքներում հողի վրա ճնշումն այնքան մեծ է, որ վայրի սննդի մատակարարները հոգնել են:



«Վայրի սնունդ» տերմինը, առհասարակ օգտագործվում է, սակայն ապակողմնորոշիչ է, քանի որ այն ենթադրում է մարդկային ներգործունեության և մենեջմենթի բացակայություն: Ժամանակի ընթացքում, մարդիկ անուղղակիորեն ձևավորել են շատ բույսեր, որոշները ընտելացվել են տնային այգիներում և դաշտերում՝ ֆերմերների մշակած սննդի և մշակաբույսերի հետ միասին: Ուստի «վայրի սնունդ» տերմինն, օգտագործվում է բնութագրելու համար բույսերի բոլոր ռեսուրսները, որոնք հավաքվում են մարդկային սպառման համար, գյուղական տարածքներից դուրս՝ անտառներում, սավանաներում և այլ թփային տարածքներում: Շատ գյուղական համայնքներում, անասնապահությամբ, մշակաբույսերի միացմամբ զբաղվող, շարունակական խոտհարների և հավաքող որսորդների համար վայրի սնունդը ներառված է նորմալ ապրելամիջոցի աղբյուրների մեջ: Վայրի սնունդը հաճախ համարվում է ֆերմենների օրական սննդի սպառման համար դիետային հավելում, ընհանուր առմամբ հիմնված իրենց մշակաբույսային բերքի, տնական խոշոր եղջերավոր արտադրանքի և տեղական շուկաներում սննդի գնման հետ միասին: Օրինակ՝ մրգերն ու հատապտուղներն, աճող բույսերի լայն շրջանակից, համարվում են «վայրի սնունդ»: Ավելին, վայրի մրգերը և հատապտուղները հավելում են կենսական վիտամիններ վիտամինային դեֆիցիտի դեպքում. հիմնականում երեխաների շրջանում:



Կան շատ պատճառներ ագրոկենսաբազմազանության նվազման համար: 20-րդ դարի ընթացքում անկումն արագացել է աճող բնակչության պահանջների հետ՝ բնական ռեսուրսների համար ուժգին պայքարի շեմին: Հիմնական խորքային պատճառները ներառում են՝

- **Ինդուստրիալ և Կանաչ Հեղափոխության գյուղատնտեսության արագ զավթումը:** Սա ներառում է ինտենսիվ անասնապահական արտադրությունը, ինդուստրիալ ձկնեղենը և ակվակուլտուրան: Որոշ արտադրական համակարգեր օգտագործում են գենտիկորեն փոփոխված տեսակներ և ցեղեր: Ավելին, համեմատաբար քիչ մշակաբույսային բազմազանություններ են մշակվում մոնոկուլտուրաներում, ինչպես նաև սահմանափակ քանակությամբ ընտանի կենդանիների տեսակներ կամ ձկներ են տարբերվում կամ քիչ ջրային տեսակներ են մշակվում:
- **Մանդային համակարգի և մարկետինգի գլոբալիզացիան:** Կենդանի օրգանիզմների ինդուստրիալ արտոնագրի երկարաձգումը և ինտելեկտուալ սեփականության այլ համակարգեր, հանգեցրել են համատարած մշակության և մի շարք տեսակների և ցեղերի բազմացման: Սա հանգեցնում է ավելի միացյալ, քիչ զանազան, բայց ավելի մրցունակ համաշխարհային շուկայի: Որշեւ հետևանք եղել են՝ ֆերմերների և

սպառողների հասկացությունների և կենսապայմանների փոփոխություն, փոքրամասշտաբ, բազմազան սննդի արտադրանքային համակարգի մարգինալիզացիա, որը պահպանում է մշակաբույսերի տեսակները և ընտանի կենդանիների ցեղերը, վարելահողային արտադրության մեջ ընտանի կենդանիների նվազեցված ինտեգրացիան, ինչը նվազեցնում է օգտագործման բազմազանությունը, ինչի համար ընտանի կենդանիների կարիքն է զգացվում:

- **Մշակաբույսերի գենետիկական էրոզիայի** հիմնական պատճառը (ինչը հաղորդվում էր համարյա բոլոր երկրներից) տեղական տեսակների փոխարինումն է բարելավված կամ էկզոտիկ տեսակների: Վերջերս, գենետիկական էրոզիան տեղի է ունենում որպես արդյունք այն բանի, որ հին տեսակները փոխարինվում են նորերով: Հաճախ, մի շարք տեսակներ նվազեցվում են, երբ առևտրային տեսակներն են ներկայացվում ավանդական գյուղատնտեսական համակարգում: Մինչ FAO-ի անդամ երկրները փաստում են, որ գենետիկական էրոզիայի որոշ ցուցանիշներ զարգացել են, մշակաբույսային գենետիկական բազմազանության գենետիկական էրոզիայի

քիչ սիստեմատիկ ուսումնասիրություններ են իրականացվել: Ավելին, FAO-ի երկրների զեկույցներում համարյա բոլոր երկրները հաստատում են, որ գենետիկական էրոզիան տեղի է ունենում և, որ այն լուրջ խնդիր է:

* Այս հրատարակությունը (խմբագրությունը) ներկայացնում է <<Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսապայմանների բարելավում>> ծրագրի արդյունքների մի մասը: Գլխավ Էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից աջակցվող սույն ծրագիրը համակարգվում է Բիովերսիթի Ինթերնաշնալի (IPGRI) կողմից ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի իրականացման աջակցությամբ (UNEP):